Արձանագրություն N 3
«ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/3Շ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» հունիսի 2017թ.
ժամը 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Օ.Խաչատրյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում են՝ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի, «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ-ի, «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ և «Կապավոր» ՍՊԸ Կոնսորցիումի, «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի, «Հովհաննես Մարտիրոսյան» ՍՊԸ-ի, «Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ-ի և «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը,

բ) չի համապատասխանում՝ «Երպետ» ՍՊԸ և «Սթոնս» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում)-ի կողմից ներկայացված հայտը, հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 35-րդ կետի 6)-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը կարող է գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Կարգի 44-րդ կետի 4)-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

«Երպետ» ՍՊԸ և «Սթոնս» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում)-ը չի ներկայացրել համատեղ գործունեության պայմանագիր, ինչը չի

համապատասխանում Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 1)-ին կետով և Կարգի 35-րդ կետի 6)-րդ ենթակետի ա. պարբերությամբ սահմանված պահանջներին:

Հայտի ապահովումը չի համապատասխանում Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3)-րդ կետով սահմանված պահանջներին:

«Երպետ» ՍՊԸ-ն չունի հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիա, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Չի համապատասխանում նաև «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ www.armeps.am էլեկտրոնային կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով երևում է, որ կազմակերպությունը մասնակցել է ընթացակարգին, սակայն ոչ մի փաստաթուղթ ներբեռնված չէ և առդիր ոչ ինչ չկա:

Չի համապատասխանում նաև «Վառմաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը քանի որ գնային առաջարկը և տուժանքը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի, «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ-ի, «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ և «Կապավոր» ՍՊԸ Կոնսորցիումի, «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ի, «Հովհաննես Մարտիրոսյան» ՍՊԸ-ի, «Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ-ի և «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

բ) «Երպետ» ՍՊԸ և «Սթոնս» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում)-ի, «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի և «Վառմաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Անբավարար», քանի որ չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

գ) ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել.

- «Հովհաննես Մարտիրոսյան» ՍՊԸ-ին՝ 1-ին և 5-րդ չափաբաժինների մասով,
- «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով,
- «Անիի ՃՇՇ» ՍՊԸ-ին՝ 3-րդ չափաբաժնի մասով,
- «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ-ին՝ 4-րդ չափաբաժնի մասով,
- «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ և «Կապավոր» ՍՊԸ Կոնսորցիումին՝ 6-րդ չափաբաժնի մասով,
- «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին՝ 7-րդ չափաբաժնի մասով,
- «Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ-ին՝ 8-րդ չափաբաժնի մասով:

դ) առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

ե) փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:30-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 4-րդ հարկ, N 419 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Օ.Խաչատրյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա.Մկրտչյան